ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեզ հասած էկոլոգիական աղետների առավել ցայտուն օրինակներից են մոտ 7000տարի առաջ (Ն.Ք. 5-րդ հազարամյակ) Հարավային Միջագետքում Եփրատ և Տիգրիս գետերի շրջակա բերրի հողերով հարուստ տարածքներում Շումերները, ոռոգման ջրանցքների կառուցումով ձևավորեցին ինտենսիվ գյուղատնտեսություն մի ամբողջ համակարգ: Ոռոգման համակարգի լայնածավալ օգտագործումը աստիճանաբար դրսևորվեց հողերի ճահճացումներով, որը արտահայտվեց կրկնակի աղակալման երևույթով: Հողերի աղակալման այս երևույթը մեզ հայտնի է «Հողը սպիտակեց աղից» արտահայտությամբ: Ի սկզբանե բերրի հողերը աստիճանաբար ենթարկվեցին անապատացման: Սա պատմական աղբյուրներով մեզ հասած էկոլոգիական աղետի վաղընջական օրինակ է:

Նմանօրինակ մեկ այլ դրսևորում է Մայաների կայսրության (Ներկայիս Մեքսիկայի և հարևան մի քանի երկրների տարածք) գյուղատնտեսական նպատակներով հողերի յուրացումը (Ն.Ք.2000- մինչև Ք.Հ. 200 ական թվերը): Այդ նպատակով հատվեցին անտառային զգալի տարածքներ, չորացվեցին ճահիճներ, կառուցվեց ոռոգման խոշոր համակարգ: Ի վերջո ինտենսիվ գյուղատնտեսությունը հանգեցրեց էկոլոգիական խոշոր աղետի՝ հողերի անապատացմանը: Իր հերթին այն նպաստեց կայսրության թուլացմանն, իսկ որոշ կարծիքներով՝ անկմանը:

Հողերի գերօգտագործման և դրա հետևանքով անապատացման մեկ այլ օրինակ է Հռոմեական կայսրության կողմից Հյուսիսային Աֆրիկայի բերրի հողերի յուրացումը: Ինտենսիվ գյուղատնտեսությունը մոտ 500 տարի ապահովում էր կայսրության բնակչության և բանակի սննդամթերքի աճող պահանջները, բայց հողօգտագործման սխալները արագացրին հողերի անապատացման դրսևորումները: Դրան գումարվեց նաև շրջակա տարածքների անտառների (նավաշինական նպատակներով) զանգվածային հատումները, որի արդյունքում հողատարածքները զրկվեցին ոռոգման համակարգը սնուցող ջրային պաշարներից:

Անտառապատ տարածքների զանգվածային ոչնչացման մի յուօրինակ վկայություն է Լիբանանի տարածքում պահպանված մայրի ծառերի փոքր անտառակները: Նախկինում (4000 տարի առաջ) լեռնային այս բարձրունքներու համատարած մայրի ծառերի (սոճազգիների ընտանիքի ասեղնատերև, մշտադալար ծառ) անտառներ են եղել: Դրանց արժեքավոր բնափայտը բարձր է գնահատվել տարածաշրջանում, իսկ եգիպտացիները զանգվածաբար այն օգտագործել են շինարարական նպատակներով: Բնափայտի զարգացող առևտուրը աստիճանաբար բերել է խոշորամասշտաբ անտառահատումների՝ մերկացնելով և ջրազրկելով լեռնալանջերը: